հավելված 1
N ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-11/12-15/14 ծածկագրով
ընթացակարգի հրավերի ծանուցման

# ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**Կազմարարական ծառայություններ**

<table>
<tr><td colspan="3">Ձեռքբերվող Ծառայության նկարագիր</td></tr>
<tr><td colspan="3">Կազմվող գործերի թերթերի առավելագույն չափսը՝ A4 ձևաչափի, կազմինը՝ A4+: A4-ից մեծ թղթեր լինելու դեպքում դրանք ծալվում են, իսկ փոքրի դեպքում՝ կարվում են Պատվիրատուի հետ համաձայնեցված մասում: Մեկ կազմվող գործի թերթերի քանակը՝ մինչև 500 թերթ: Թերթերը սոսնձվում և ամբողջությամբ կարվում են թելերով: Անհրաժեշտության դեպքում թերթերի վրայի կարված մետաղական լարերը հեռացվում են, իսկ թերթերի չափսերը՝ հավասարեցվում:</td></tr>
<tr><td>Հ/հ</td><td>Տեխնիկական բնութագիր</td><td>Նվազագույն քանակը</td></tr>
<tr><td>1</td><td>Կազմը՝ 1.5-ից 2.0մմ հաստությամբ և 1500-ից - 1800 գ/քմ խտությամբ ստվարաթուղթ՝ պատված ոչ շատ վառ գույնի արհեստական կաշվով կամ նման այլ նյութով, անհրաժեշտության դեպքում կողքին կամ դիմերեսին գործի անվանումը՝ համաձայնեցված Պատվիրատուի հետ, ներսից ամբողջությամբ սոսնձված սպիտակ թուղթ:</td><td>Նախատեսվում է նվազագույնը 200 հատ գործ</td></tr>
<tr><td>2</td><td>Կազմը՝ 200-ից 300 գ/ք.մ. խտությամբ կավճապատ թուղթ /տրամադրում է Պատվիրատուն/, կարվող մասում երկու կողմից առնվազն 1.0 մմ հաստությամբ և 10.0մմ լայնությամբ ստվարաթուղթ:</td><td>Նախատեսվում է նվազագույնը 3000 հատ գործ</td></tr>
<tr><td colspan="3">Ծառայության մատուցման ժամկետը</td></tr>
<tr><td colspan="2">Սկիզբը</td><td>ավարտը</td></tr>
<tr><td colspan="2">Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 5-րդ աշխատանքային օրը</td><td>2015 թվականի դեկտեմբերի 21-ը:</td></tr>
</table>

- Կատարողը՝ մինչև ծառայությունների մատուցումը, օգտագործվող նյութերը /թել, թուղթ, ստվարաթուղթ, արհեստական կաշի/, ինչպես նաև մեկ կազմի օրինակ ձևավորելուց և պատրաստելուց հետո դրանք համաձայնեցնում է Պատվիրատուի հետ:
- Կատարողը պարտավոր է չհրապարակել Պատվիրատուի կողմից տրամադրված կազմվող նյութերը և պահպանել դրանց գաղտնիությունը:
- Ծառայությունները պետք է կատարվեն ՀՀ կառավարության աշխատակազմի վարչական շենքում՝ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն-1 հասցեում:
- Կատարողը պարտավոր է Պատվիրատուի կողմից տրամադրված նյութերը կազմել դրանք ստանալու օրվանից հաշված.

ա) 1-ին չափաբաժնի համար - մեկ աշխատանքային օրվա ընթացքում առնվազն 4 գործ,

բ) 2-րդ չափաբաժնի համար - մեկ աշխատանքային օրվա ընթացքում առնվազն 40 գործ:

- Ծառայությունների դիմաց վճարումը՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 2-րդ եռամսյակում-50%, 3-րդ եռամսյակում-75% և 4-րդ եռամսյակում-100%:

**ՀՀ կառավարության աշխատակազմ**